

05.09.2018թ.

ժ.12: 00

Մասնակցում էին՝ Ս.Մասցականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան, Ն.Բաղդասարյան, Լ.Պևրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան, Ա.Վարդանյան, Ա.Հարությունյան, Լ. Քալանթարյան

Օրակարգի նախագծում հինգ հարց.

1. «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության դեպարտամենտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայից ֆորմալ հատվածի ոչ պետական կազմակերպություններում աշխատողների վարձատրությանը վերաբերող անվանագրքով միկրոտվյալներն ըստ աշխատողների զբաղմունքի տեսակների և ՀՀ վարչատարածքային բաժանման Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2017 թվականի հուլիսի 14-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի՝ 2017 թվականի հուլիսի 14-ի «Տեղեկատվություն ապրանքների վաճառքի և մնացորդի վերաբերյալ» Ձև 3-առևտուր (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 12-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 15-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-SS (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հարությունյան/

Որոշեցին՝

հաստատել «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի և ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2018 թվականի հունվարի 29-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների մասին» Ձև 1-ՏՏ (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և Հայաստանի հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 03-Ա որոշումը

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ 5, դեմ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության դեպարտամենտին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան Աշխատանքի միջազգային կազմակերպության վիճակագրության դեպարտամենտին գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ 7, դեմ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայից ֆորմալ հատվածի ոչ պետական կազմակերպություններում աշխատողների վարձատրությանը վերաբերող անվանագրքով միկրոտվյալներն ըստ աշխատողների զբաղմունքի տեսակների և ՀՀ վարչատարածքային բաժանման Հայաստանի Հանրապետության Վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի աշխատանքի վիճակագրության բաժնին՝ տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2017 թվականին տնային տնտեսություններում իրականացված Աշխատուժի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազայից ֆորմալ հատվածի ոչ պետական կազմակերպություններում աշխատողների վարձատրությանը վերաբերող անվանագրքով միկրոտվյալներն ըստ աշխատողների զբաղմունքի տեսակների և ՀՀ վարչատարածքային բաժանման գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ 7, դեմ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ